ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի հայցորդ,
ՀՀ Արդարադատության նախարարության իրավական ակտերի
փորձաքննության գործակալության դատահիրավական
օրենսդրության փորձաքննության բաժնի պետ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿ

Հոդվածում քննարկվում է արտոնությունների, որպես իրավական առավելությունների տեսակի իրավաբանական բնույթը և դրանց նշանակությունը: Արտոնությունները, որոնց միջոցով անձին կամ որոշակի խմբերին տրվում են հատուկ իրավունքներ կամ ազատություններ, ներկայացվում են որպես բացառություններ ընդհանուր կանոններից, որոնց նպատակն է սոցիալապես պաշտպանել և բարելավել որոշ անձանց իրավական դրությունը: Հոդվածում առանձնացված են արտոնությունների տարբեր տեսակներ, ինչպես նաև ներկայացված են ՀՀ օրենսդրությամբ որոշակի սոցիալական խմբերին, օրինակ՝ զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող արտոնությունները:

Սույն գիտական հետազոտության մեջ նշվում է, որ արտոնությունները կարող են լինել նաև իրավական այլ միջոցների՝ այդ թվում երաշխիքների մի մասն, սակայն դրանք տարբեր են: Իրավական երաշխիքները ուղղված են մարդու իրավունքների պաշտպանությանը, իսկ արտոնությունները հատուկ առավելություններ են, որոնք տրամադրվում են որոշակի անձանց՝ նշված անձանց իրավական վիճակը բարելավելու նպատակով: Արտոնությունների տրամադրումը պետք է հստակ սահմանված լինի օրենքներով՝ արդարության ապահովման և չարաշահումները կանխելու նպատակով:

Վերոնշյալը ընդգծում է արտոնությունների, որպես իրավական կարգավորման միջոցի, կարևորությունը արդար ու հավասար հասարակություն ստեղծելու գործում:

Հիմնաբառեր - առավելություն, անձեռնմխելիություն, արտոնություն, առանձնաշնորհություն, երաշխիք:

Ներածություն

Ժամանակակից իրավական համակարգերի զարգացման պայմաններում առավելությունների ինստիտուտի տեսական և գործնական ուսումնասիրման անհրաժեշտությունը առավել քան ակնհայտ է: Իրավական առավելությունները իրավակարգավորման այն յուրահատուկ միջոցներն են, որոնք նպատակ ունեն ապահովելու իրավունքի սոցիալական արդարությունը, խթանելու քաղաքացիների իրավական ակտիվությունը և նպաստելու հասարակական հարաբերությունների հավասարակշռված զարգացմանը:

Խնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկայումս հայրենական իրավագիտության մեջ «իրավական առավելություն», «արտոնություն», «առանձնաշնորհություն» և «երաշխիք» հասկացությունները հաճախ օգտագործվում են ոչ ամբողջությամբ տարբերակված ձևով, ինչն առաջացնում է տեսական անորոշություններ և իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է խճճված մոտեցումների:

Սույն հոդվածի գիտական նորույթը կայանում է «իրավական առավելություններ» կատեգորիայի ներքին կառուցվածքի և տեսակային տարբերակման խորացված վերլուծության մեջ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով արտոնությունների ինստիտուտին՝ որպես իրավական առավելությունների ինքնուրույն տեսակի: Հեղինակը փորձում է բացահայտել արտոնությունների բնույթը, դրանց սահմանման և կիրառման մեխանիզմների առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց տարբերությունը իրավական առանձնաշնորհություններից և երաշխիքներից:

Հետազոտության նպատակն է՝

- բացահայտել իրավական առավելությունների և դրանց տեսակների տեսական հիմքերը,
- ուսումնասիրել արտոնությունների իրավական բնույթն ու կիրառման դերը պետական և հասարակական հարաբերություններում,
- ներկայացնել արտոնությունների տարաբնույթ կարգավորումները ՀՀ օրենսդրությամբ և միջազգային իրավական ակտերով,
- բացահայտել արտոնությունների ինստիտուտի զարգացման անհրաժեշտ ուղղությունները իրավական համակարգի կատարելագործման համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել մի շարք հայրենական և արտասահ-

www.ardaradatutyunjournal.com

մանյան գիտնականների տարաբնույթ աշխատությունները, միջազգային և ներպետական օրենսդրությունը: Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել համացանցային մի շարք կայքեր և տեղեկատվական այլ աղբյուրներ:

Սույն հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես համագիտական՝ մատերիալիստական, համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական, սոցոլոգիական մեթոդները, այնպես էլ տրամաբանական մեթոդները՝ սինթեզը, անալիզը, անալոգիան, ինդուկցիան, դեդուկցիան և մի շարք այլ մեթոդներ:

Իրավական առավելությունների դասակարգումը

Մեր կողմից նախկինում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավական առավելությունները կարելի է դասակարգել ըստ հետևյալ տեսակների.

- արտոնություններ
- առանձնաշնորհություններ
- անձեռնմխելիություններ

Հիմք ընդունելով «իրավական առավելություններ» հասկացության տեսակների վերոնշյալ դասակարգումը՝ սույն հետազոտության մեջ անդրադարձ կկատարենք միայն «իրավական առավելություններ» հասկացության տեսակ հանդիսացող «արտոնություններ» իրավական հասկացությանը՝ նշելով այդ իրավական հասկացության յուրահատկությունները, որոնք թույլ են տալիս այդ հասկացությունը տարբերակել իրավական առավելությունների վերը նշված տեսակներից:

Ինչ վերաբերում է «իրավական առավելություններ» հասկացության մյուս տեսակներին, ապա գտնում ենք, որ սույն հետազոտությունը անհարկի չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է այդ տեսակներին անդրադառնալ մեկ այլ հետազոտությամբ:

Արտոնությունները որպես իրավական առավելությունների տեսակ

Իրավական առավելությունների տակ սովորաբար հասկացվում է սուբյեկտի դրության օրինաչափ թեթևացումը, որը նրան թույլ է տալիս առավել լիարժեք ձևով բավարարելու իր շահերը, և դա արտահայտվում է ինչպես լրացուցիչ, հատուկ իրավունքների (առավելությունների) տրամադրման, այնպես էլ՝ պարտականություններից ազատման մեջ, որոնք իրավական ներգործության տեղեկատվահոգեբանական մեխանիզմում հանդիսանում են կարևորագույն խթանիչ միջոցներ և իրավական համակարգի վերափոխման պայմաններում առավել նշանակալի դեր են խաղում ժամանակակից իրավական կյանքում, իսկ իրավական առավելությունների տեսակ հանդիսացող արտոնությունը, դա առավելությունների տրամադրումն է կամ մասնակի ազատումը պարտականությունների կատարումից, կամ էլ դրանց կատարման պայմանների դյուրինացումն է[1], որի տարբերությունը իրավական առավելությունների այլ տեսակներից կայանում իր յուրահատուկ հատկանիշների մեջ, մասնավորապես՝ իրավական արտոնություններին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

Առաջին հերթին, դրանք ուղեկցվում են սուբյեկտի շահերի առավել լիարժեք բավարարմամբ, նրանց կենսագործունեության պայմանների թեթևացմամբ, ինչը պարտադիր կերպով պետք է իրականացվի հասարակական շահերի շրջանակներում:

Արտոնություններ սահմանելիս օրենսդիրը նպատակ է դնում սոցիալապես պաշտպանել, բարելավել առանձին անձանց դրությունը՝ առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով նրանց շահերի բավարարման համար:

ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված արտոնությունների վառ օրինակ են հանդիսանում զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին տրված մի շարք արտոնությունները, մասնավորապես՝

- ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի հարկից ազատվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ նրանց ընտանիքի անդամներին) սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը, իսկ եթե անձն ամուսնացած չի եղել կամ չունի (չի ունեցել) զավակներ՝ մինչև հարկման օբյեկտի նկատմամբ ընտանիքի անդամի սեփականության իրավունքի դադարելը, իսկ նույն օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով վերոնշյալ անձինք ազատվում են նաև փոխադրամիջոցների գույքահարկից[2]:
- «Պետական տուրքի մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝ զինվորական այլ պարտականություններ կատարելիս զոհված կամ անհայտ կորած անձանց ընտանիքի անդամները՝ վերոհիշյալ հիմքերով արտոնություններ վերապահելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար, իսկ նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են նաև ռազմական գործո-

ղությունների մասնակիցները, ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձի ամուսինը, զավակը և ծնողը[3]:

• «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու առաջնահերթության իրավունքից, ըստ հերթագրման ամսաթվի, համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի, օգտվում են նաև զոհված զինծառայողի երեխան, քույրը, եղբայրը[4]:

Միաժամանակ հավելենք նաև, որ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներով, ինչպես նաև մի շարք այլ օրենքներով և ենթաօրենսդրական իրավական ակտերով ևս զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին ներկայումս տրված է մի շարք արտոնություններ և երաշխիքներ:

Արտոնությունների պարագայում նպատակները ձեռք են բերում առաջնային նշանակություն, քանզի ոչ բոլոր դեպքերում է, որ իրավունքների ընդլայնումը և պարտականություններից ազատումը հանդես են գալիս որպես արտոնություն: Օրինակ՝ արտակարգ դրության պայմաններում գործադիր իշխանության լիազորությունների մեծացումը, ինչպիսիք են «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 7-րդ հոդվածով սահմանված հավաքներ կամ հանրային միջոցառումներ իրականացնելու և դրանց մասնակցելու սահմանափակման կամ արգելման, գործադուլների և իրավաբանական անձանց գործունեությունը կասեցնող կամ դադարեցնող այլ միջոցառումների արգելումն, պարետային ժամի սահմանման կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման իրավական հնարավորության վերաբերյալ կարգավորումները[5] և ընդհանրապես ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածով նախատեսված արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելու իրավունքի վերաբերյալ առկա կարգավորումները (որոշ բացառություններով) կամ ՀՀ Սահմանադրության 115-րդ հոդվածով սահմանված արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացվելու կամ քննարկվելու արգելքի վերաբերյալ կարգավորումները[6], չեն հանդիսանում իրավական արտոնություններ, քանի որ կառավարության իրավունքների ընդլայնումն արտակարգ իրադրության պայմաններում կապված է ոչ թե նրա կարգավիճակի բարելավման, այլ ստեղծված իրադրությունից օպերատիվ և օպտիմալ ձևով դուրս գալու համար մանևրելու առավել մեծ հնարավորություն և գործելու ազատություն ստանալու հետ:

Տվյալ համատեքստում ցանկանում ենք նշել նաև, որ օրինակ՝ ՀՀ-ում գտնվող օտարերկրյա քաղաքացիների ազատումը զինվորական ծառայությունից նույնպես չի հանդիսանում արտոնություն, քանի որ դա ինքնին թելադրված է քաղաքական բնույթի դատողություններից (պետության անվտանգություն և այլն) և կապված է նրանց մոտ ՀՀ քաղաքացիության բացակայության փաստի հետ, իսկ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու պարտականություն նախատեսված է միայն ՀՀ քաղաքացիների համար[7]:

Երկրորդ, իրավական արտոնություններն իրենցից ներկայացնում են բացառություններ՝ ընդհանուր կանոններից, շեղում՝ նորմատիվային բնույթի միասնական պահանջներից՝ հանդես գալով որպես իրավաբանական տարբերակման միջոց:

Որքան կատարյալ է իրավունքը, այնքան տարբերակված ձևով է այն կանոնակարգում հասարակական կյանքի որոշակի հարցեր: Այսպես, տարբեր կատեգորիայի քաղաքացիների համար սահմանված են կանոններ, որոնք կարգավորում են ԲՈՒՀ ընդունվելու, զինվորական ծառայության զորակոչվելու և կենսաթոշակների նշանակման կարգը, օրինակ՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածում սահմանված է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, իսկ հատուկ սուբյեկտների համար նույն օրենքի 10-րդ հոդվածում, նախատեսված են մի շարք բացառություններ, մասնավորապես օրինակ՝ 55 տարին լրացած անձին կարող է արտոնյալ պայմաններով նշանակվել կենսաթոշակ եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 15 օրացուցային տարի աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում, մինչև 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 7 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք և այլն[8]:

Վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ արտոնությունների իրավական կանոնակարգման բացակայության ժամանակ, այս կամ այն ոլորտում կառավարման մարմինները ստիպված են,

www.ardaradatutyunjournal.com

հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, իրենց հայեցողությամբ կատարելու բացառություններ առանձին անձանց համար, ինչը հանգեցնում է անիրդաշնակության պրակտիկ գործունեության մեջ և սողանցք է բացում սուբյեկտիվիզմի և անգամ չարաշահումների համար, ուստի գտնում ենք, որ արտոնությունները և դրանց տրամադրման հիմքերը հստակ պետք է սահմանված և ձևակերպված լինեն համապատասխան օրենքներում և/կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, որոնք իրավակիրառ պրակտիկայում կբացառեն դրանց կիրառման կապակցությամբ պետական մարմիններին տրված հայեցողական լիազորությունների անհարկի ընդլայնումը:

Այս համատեքստում, միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ հայրենական իրավաբանական գրականության մեջ շատ հաճախ արտոնություն հասկացությունը շփոթում են իրավական առավելությունների մեկ այլ տեսակի՝ իրավական առանձնաշնորհությունների հետ, որոնք փաստացի իշխանական մարմինների և պաշտոնատար անձանց մաքսիմալ առավելություններն են, որոնք բնութագրում են նրանց սոցիալական և անհատական կարգավիճակը:

Իշխանություն ունեցող ցանկացած հասարակության մեջ առաջանում է ի շահ հասարակության իշխանական լիազորություններ իրականացնող անձանց իրավաբանորեն «առանձացնելու» անհրաժեշտություն[9]: Նրանց կողմից ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ է սահմանել առանձնաշնորհություն կոչվող առավելություններ:

Արտոնություններից առանձնաշնորհությունների տարբերությունը կայանում է նրանում, որ առաջինները տարածվում են լայն շրջանակի անձանց վրա և ունեն կիրառման լայն շրջանակ, իսկ վերջիններս՝ հանդիսանում են սպեցիֆիկ արտոնություններ, բացառությունների բացառում: Դրանց տարբերությունը նաև կայանում է նրանում, որ արտոնությունները ուղղված են տարբեր «թույլ» սուբյեկտների դրության դյուրինացմանը, իսկ առանձնաշնորությունները՝ «ուժեղների» քաղաքական էլիտայի աջակցմանը:

Առանձնաշնորհությունները չպետք է լինեն շատ, հակառակ դեպքում դրանք կկորցնեն իրենց նշանակությունը, կդառնան կանոն, այլ ոչ՝ բացառություն, ինքնին ենթադրվող, և ոչ թե խթան: Ելամիտ չափաբաժինների խախտումը կհանգեցնի համակարգերի ապակայունացմանը, հետևաբար՝ այն չի կարելի թույլատրել[10], իսկ արտոնությունների պարագայում այդ ռիսկերը ավելի նվազ են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ արտոնությունների շահառուները հասարակության լայն շերտերն են, այլ ոչ թե իշխանական լիազորություններ իրականացնող անձինք:

Ուստի իրավական առավելությունների առկայությունը որևէ պարագայում չի կարող հակադրվել իրավական հավասարության սկզբունքին, որը համարվում է իրավունքի առաջնային սկզբունքներից մեկը: Այն կանգնած է արդարության, օրինականության և այլ կարևոր համընդհանուր իրավական սկզբունքների հետ մի շարքում[11]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք հստակ ամրագրել, որ արտոնությունն, առաջին հերթին, անձի հատուկ իրավական կարգավիճակի տարր է՝ իրավաբանական բնույթի առանձնահատուկ հնարավորություններով սուբյեկտի հիմնական իրավունքների և ազատությունների լրացման մեխանիզմ:

Երկրորդ, իրավական արտոնությունները հանդես են գալիս որպես օրինաչափ բացառություններ, օրինական բացառումներ, որոնք, իրավաստեղծման ժողովրդավարական գործընթացներին համապատասխան, սահմանվում են նորմատիվային ակտերում իրավասու մարմինների կողմից:

Արտոնությունները, որպես կանոն, ամրագրվում են նորմատիվային, այլ ոչ թե իրավակիրառ ակտերի օգնությամբ: Որոշ դեպքերում արգելվում է նաև արտոնությունների տրամադրումն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, ինչը հետապնդում է այդ գործընթացի մեջ հնարավոր շահախնդրությունը նվազագույնի հասցնելու նպատակ: Նման կարգավորման վառ օրինակ է հանդիսանում ՀՀ հարկային օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասում առկա այն կարգավորումները, որոնց համաձայն՝ հարկային արտոնությունները սահմանվում են բացառապես օրենսգրքով կամ ՀՀ օրենքներով, բացառությամբ նույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքի, իսկ նույն հոդվածի 3.1-րդ մասի համաձայն՝ անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված, Կառավարությունը կարող է սահմանել հարկի կամ հարկման բազայի նվազեցում՝ Կառավարության սահմանած կարգով, չափերով և ժամանակահատվածով[12] (նշված կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 25-ի N 113-Ն որոշմամբ), ինչը տվյալ դեպքում հանդիսանում է անհրաժեշտ բացառություն, քանի որ արտակարգ և անկանխելի հանգամանքների առկայության պայմաններում ՀՀ հարկային օրենսգրքով կամ ՀՀ այլ օրենքներով նոր արտոնությունների սահմանումը բավականին երկար և ծավալուն գործընթաց է, իսկ տվյալ պարագայում ավելի առաջնահերթ է արտոնությունների հրատապ սահմանումը:

«Արտոնություն» կատեգորիան պետք է տարբերակել «երաշխիք» կատեգորիայից, որն իր ծավալով առավել լայն է, քանզի, բացի արտոնություններից, իր մեջ ներառում է նաև այլ իրավաբանա-

կան միջոցներ՝ խրախուսանքներ, պատիժներ, պարտականություններ, արգելքներ և այլն: Այդ պատճառով, լրիվ օրինաչափ է, որ նորմատիվային ակտերում արտոնությունները հաճախ ամրագրվում են երաշխիքներին նվիրված բաժիններում, գլուխներում և հոդվածներում:

Իրավական արտոնությունների հիմնական նպատակը կայանում է անձի, սոցիալական խմբերի, և պետության շահերի համաձայնեցման մեջ: Արտոնությունները կապում և ներդաշնակեցնում են այդ տարբեր շահերը՝ թույլ տալով դրանք բավարարել, տեղաբաշխելով սոցիալական բարիքները, և դրանով իսկ, օժանդակելով ինչպես առանձին քաղաքացու, այնպես էլ ամբողջ հասարակության բնականոն զարգացմանը:

Այս համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ հաշմանդամություն ունեցող անձանց՝ ՀՀ գործող օրենսդրությամբ տրված մի շարք երաշխիքներին, որոնք սակայն իրենց բնույթից ելնելով չեն կարող դիտարկվել որպես արտոնություններ, քանի որ դրանք վերաբերում են այն միջոցներին կամ պայմաններին, որոնք ապահովում են հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների պաշտպանությունը և դրանց արդյունավետ իրացումը, մասնավորապես՝

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը»[13]:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝ աշխատավայրում կամ ուսումնական հաստատությունում հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա կատարվում է խելամիտ հարմարեցում գործատուի կամ ուսումնական հաստատության ղեկավարի (այսուհետ՝ պարտականություն կրող) հետ երկխոսության միջոցով: ելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանում է Կառավարությունը[14]:

Վերոնշյալ լիազորող նորմի հիման վրա ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին» N 1265-Ն որոշումը, որի հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ Խ

ելամիտ հարմարեցումների համար կարող է դիմել անձը, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում՝ օրինական ներկայացուցիչը.

1) թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար, աշխատանքի ընդունվելու դեպքում.

2) աշխատողը՝ աշխատանքային պայմանագրով կամ պաշտոնի անձնագրով նախատեսված պարտականությունները կատարելիս՝ ներառյալ փորձաշրջանի ընթացքում, աշխատավայրում ուսումնառության, աշխատանքում առաջխաղացման նպատակով և այլն.

3) «Կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դիմորդը ուսումնական հաստատություններ ընդունելության գործընթացի, իսկ սովորողը ուսումնական հաստատությունում սովորելու ամբողջ ընթացքում[15]:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող ֆիզիկական միջավայրի մատչելիությունն ապահովող ընդհանուր պահանջները, ստանդարտները, նորմերը և կանոնները մշակում և հաստատում է քաղաքաշինության ոլորտում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը»:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի, հասարակական արտադրական նշանակության շենքերի և շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծումը, շինարարությունը և վերակառուցումը (հանրային նշանակության շենքերի և շինությունների դեպքում նաև հիմնանորոգումը), եթե իրականացման արդյունքները չեն համապատասխանելու համընդհանուր դիզայնի սկզբունքներին կամ այլ կերպ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործման համար»[16], իսկ սույն կարգավորման պահանջները խախտելու համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157.16-րդ հոդվածով[17]:

Հասարակական, բնակելի և արտադրական շենքերի նախագծման և վերակառուցման դեպքում, հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար մատչելի շենքերի և շինությունների ֆունկցիոնալ-հատակագծային տարրերի, դրանց տեղամասերի, մուտքային հանգույցների, հաղորդակցությունների, տարահանման ուղիների, բնակության, սպասարկման և աշխատատեղերի սենքերի (գոտիների), ինչպես նաև դրանց տեղեկատվական և ինժեներական սարքավորվածության հետ կապված հարաբերությունները հստակ կագավորված են նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանով[18]:

Ինչ վերաբերում է հյուրանոցային տնտեսության օբյեկտներին, ապա ցանկանում ենք նշել, որ ըստ ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 25-ի N 1383-Ն որոշման հավելված N 1-ի՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների, մաս-

www.ardaradatutyunjournal.com

նավորապես՝ հյուրանոցների և մոթելների որակավորման ամենացածր մեկաստղանի կարգ ստանալու համար անհրաժեշտ է, որպեսզի դեպի ընդունելության նախասրահ տանող մուտքը հարմարեցված լինի հաշմանդամների տեղաշարժման համար[19]:

Միաժամանակ ցանկանում ենք նշել նաև, որ «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը քաղաքաշինության բնագավառում ապահովում է հաշմանդամների համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացումը[20]:

Վերոնշյալ իրավակարգավորումները բխում են նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետի դրույթներից, որոնց համաձայն՝

«Մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության: Այս նպատակով մասնակից պետությունները պարտավորվում են.

նախաձեռնել և նպաստել սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված՝ համընդհանուր ձևավորում ունեցող ապրանքների, ծառայությունների, սարքավորումների և հաստատությունների վերաբերյալ հետազոտություններին և զարգացումներին, որոնք կպահանջեն նվազագույն հարմարեցում և ծախսեր՝ բավարարելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները, կխթանեն դրանց մատչելիությունն ու գործածումը, ինչպես նաև կնպաստեն համընդհանուր ձևավորման կիրառմանը չափորոշիչներ ու ուղեցույցներ մշակելիս.»[21]:

Ուստի, վերոնշյալից պարզ է դառնում, որ իրավական երաշխիքները և իրավական արտոնությունները տարբեր հասկացություններ են: Իրավական երաշխիքները վերաբերում են այն իրավական միջոցներին, որոնք ապահովում են անհատի իրավունքների պաշտպանությունը և արդյունավետ իրացումը, իսկ իրավական արտոնությունները մեկնաբանվում են որպես հատուկ առավելություններ, որոնք անհատներին կամ խմբերին տրվում են իրավական ակտերով, սովորաբար՝ պետական մարմինների կողմից, ուստի կարող ենք պնդել, որ իրավական երաշխիքները ուղղված են որոշակի անձանց իրավունքների ընդհանուր պաշտպանությանը և արդյունավետ իրացմանը, իսկ իրավական արտոնությունները տրամադրում են հատուկ առավելություններ, որոնցով հասարակության ոչ բոլոր անդամներն են փաստացի օժտված:

Եզրակացություն

Իրավական առավելությունների ինստիտուտը, իր բազմաշերտ բնույթով, կարևոր դեր է խաղում իրավական համակարգի արդյունավետության, սոցիալական արդարության և իրավական կարգավորման խթանիչ մեխանիզմների ձևավորման գործում: Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ իրավական առավելությունները հանդես են գալիս ոչ միայն որպես իրավական կարգավորման լրացուցիչ միջոց, այլև՝ որպես պետական քաղաքականության գործիք, որն ուղղված է իրավունքի սուբյեկտների ակտիվության բարձրացմանը և հասարակական հարաբերությունների հավասարակշռված զարգացմանը:

Սույն հետազոտությունում իրականացված վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ «արտոնություն» հասկացությունը պետք է դիտարկել որպես իրավական առավելությունների ինքնուրույն և առանձնահատուկ տեսակ, որը բնորոշվում է իր նպատակային ուղղվածությամբ, կիրառման ոլորտով և ազդեցության ձևերով: Արտոնությունը, ի տարբերություն առանձնաշնորհության, չի բխում իշխանական լիազորություններից, այլ ուղղված է իրավունքի սուբյեկտների որոշակի խմբերի համար իրավական հնարավորությունների ընդլայնմանը կամ պարտականությունների կատարումը դյուրինացնելուն: Այս հանգամանքը նվազեցնում է սոցիալական անհավասարության և իրավական ռիսկերի առաջացման վտանգը՝ դարձնելով արտոնությունները առավել արդիական իրավական գործիք ժամանակակից իրավական համակարգում:

Հետազոտության արդյունքում կարելի է ձևակերպել մի շարք տեսական և գործնական եզրահանգումներ.

1. Իրավական կարգավորման համակարգում արտոնությունները հանդես են գալիս որպես խթանիչ իրավական միջոց, որը հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին առավել արդյունավետ իրականացնել իրենց իրավունքները և կատարել պարտականությունները՝ առանց իրավական հավասարության սկզբունքի խախտման:

2. ՀՀ օրենսդրական դաշտում առկա է արտոնությունների լայն կիրառություն, սակայն դրանց արդյունավետության, նպատակահարմարության և իրավաչափության վերաբերյալ բացակայում են խորքային գիտական հետազոտություններ: Այս բացը հանգեցնում է այն բանին, որ «արտոնություն» հասկացությունը հաճախ չի տարբերակվում «առանձնաշնորհություն» կամ «սոցիալական երաշխիք» հսկացություններից:

3. Արտոնությունների ինստիտուտի նորմատիվ հիմքերը պետք է ենթարկվեն համակարգային վերանայման՝ հստակեցնելով դրանց տրամադրման չափանիշները, իրավական հետևանքները և

կիրառման ոլորտները: Սա հնարավորություն կտա բացառել կամայական մեկնաբանությունները և ապահովել դրանց կանխատեսելի և իրավաչափ կիրարկումը:

4. Տեսական հարթությունում անհրաժեշտ է արտոնությունների վերաբերյալ ձևավորել միասնական գիտական մոտեցում՝ առանձնացնելով դրանք իրավական առավելությունների ընդհանուր համակարգում և հստակ տարբերակել «արտոնություն», «առանձնաշնորհություն» և «երաշխիք» հասկացությունները՝ բացառելու իրավաբանական անորոշությունները ինչպես գիտական, այնպես էլ կիրառական հարթությունում:

5. Գործնական տեսանկյունից, անհրաժեշտ է իրականացնել էմպիրիկ (փորձագիտական) ուսումնասիրություններ՝ գնահատելու արտոնությունների ինստիտուտի արդյունավետությունը տարբեր ոլորտներում (օրինակ՝ հարկային արտոնություններ, սոցիալական արտոնություններ, կրթական արտոնություններ և այլն)՝ ի շահ իրավական համակարգի արդիականացման:

6. Իրավաբանական կրթության և գիտահետազոտական դաշտում նպատակահարմար է ավելացնել արտոնությունների վերաբերյալ խորացված թեմատիկ վերլուծությունները՝ որպես պետության և իրավունքի տեսության որոշակի ուղղություն, քանի որ դրանք ուղղակիորեն առնչվում են իրավական խթանների և սահմանափակումների տեսությանը:

7. Հետագա հետազոտությունները պետք է ուղղվեն արտոնությունների համակարգի համեմատական վերլուծությանը՝ հիմնվելով միջազգային իրավունքի և տարբեր երկրների օրենսդրական փորձի վրա: Սա թույլ կտա բացահայտել արտոնությունների ինստիտուտի առավել արդյունավետ մոդելները և հարմարեցնել դրանք հայրենական իրավակարգին:

8. Հաճախ են կիրառվում և ունեն զգալի սոցիալ-տնտեսական նշանակություն:

Եզրափակելով՝ կարելի է նշել, որ արտոնությունների ինստիտուտի խորքային տեսական վերլուծությունն ու նորմատիվ հստակեցումը կնպաստեն իրավական համակարգի արդիականացմանը, իրավունքի սոցիալական ֆունկցիայի իրականացմանը և իրավունքի սուբյեկտների հավասարության սկզբունքի ապահովմանը՝ առանց խաթարելու իրավական արդարության և իրավահավասարության սկզբունքները:

---

[1] Տե՛ս, Малько А.В.,Стимулы и ограниччения в праве М., 2003, էջ 66:

[2] Տե՛ս, 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի, https://www.arlis.am/

[3] Տե՛ս, «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենք, https://www.arlis.am/

[4] Տե՛ս, «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-236-Ն օրենք, https://www.arlis.am/

[5] Տե՛ս, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-106-Ն օրենք, https://www.arlis.am/

[6] Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն (22.12.2015թ-ի խմբագրությամբ), https://www.arlis.am/

[7] Տե՛ս, նույն տեղում:

[8] Տե՛ս, «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենք, https://www.arlis.am/

[9] Мирошник С.В., Правовые стимулы в Российском законодательстве: Автореф.дис.канд.юрид.наук, Ростов-на Дону, 1997, էջ 69:

[10] Տե՛ս, Фомин А.А., Юридическая безопасность-особая разновидность социальной безопасности: понятие и общая характеристика// Государство и право 2006 №2, էջ 78:

[11] Տե՛ս, Хайруллин В.И. ,Что такое «коммунитарная справедивость»// Государство и право, 2007 №9, էջ 94:

[12] Տե՛ս, 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի, https://www.arlis.am/

[13] Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն (22.12.2015թ-ի խմբագրությամբ), https://www.arlis.am/

[14] Տե՛ս, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենք, https://www.arlis.am/

[15] Տե՛ս, ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին» N 1265-Ն որոշում, https://www.arlis.am/

www.ardaradatutyunjournal.com

[16] Տե՛ս, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենք, https://www.arlis.am/
[17] Տե՛ս, 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, https://www.arlis.am/
[18] Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» N 253-Ն հրաման, https://www.arlis.am/
[19] Տե՛ս, ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 25-ի «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը և չափանիշները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը սահմանելու մասին» N 1383-Ն որոշում, https://www.arlis.am/
[20] Տե՛ս, «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենք, https://www.arlis.am/
[21] Տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, https://www.arlis.am/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-106-Ն օրենք, https://www.arlis.am/
2. ՀՀ Սահմանադրություն (22.12.2015թ-ի խմբագրությամբ), https://www.arlis.am/
3. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենք, https://www.arlis.am/
4. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի, https://www.arlis.am/
5. «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» N 253-Ն հրաման, https://www.arlis.am/
6. ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 25-ի «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը և չափանիշները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը սահմանելու մասին» N 1383-Ն որոշում, https://www.arlis.am/
7. ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին» N 1265-Ն որոշում, https://www.arlis.am/
8. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենք, https://www.arlis.am/
9. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, https://www.arlis.am/
10. «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-236-Ն օրենք, https://www.arlis.am/
11. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենք, https://www.arlis.am/
12. «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենք, https://www.arlis.am/
13. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, https://www.arlis.am/
14. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենք, https://www.arlis.am/
15. Малько А.В., Стимулы и ограничения в праве, М., 2003, с. 250.
16. Мирошник С.В., Правовые стимулы в Российском законодательстве: Автореф.дис.канд.юрид.наук, Ростов-на Дону, 1997, с. 167.
17. Фомин А.А., Юридическая безопасность-особая разновидность социальной безопасности: понятие и общая характеристика// Государство и право 2006 №2, стр. 72-80.
18. Хайруллин В.И., Что такое “коммунитарная справедивость”// Государство и право, 2007 №9, стр. 93-96:

References

1. “Artakarg drut’yan iravakan rejimi masin” [Law on the Legal Regime of State of Emergency], March 21, 2012, HO-106-N, https://www.arlis.am/ (In Armenian)
2. Hayastani Hanrapetut’yan Sahmanadrutyun (khmbagrutyamb 22.12.2015) [Constitution of the Republic of Armenia, as amended on December 22, 2015], https://www.arlis.am/ (In Armenian)
3. “Hashmandamutyun unecox anzants iravunk’neri masin” [Law on the Rights of Persons with Disabilities], May 5, 2021, HO-194-N, https://www.arlis.am/ (In Armenian)
4. Hayastani Hanrapetut’yan Harkayin orensgirk’ [Tax Code of the Republic of Armenia], October 4, 2016, https://www.arlis.am/ (In Armenian)
5. “Hamakargneri matcheliut’yuny sakavasharzhun khumberi hamar” shinararakan normeri hastatman masin N 253-N

hraman [Order No. 253-N on Approval of Construction Norms for Accessibility of Buildings for People with Limited Mobility], November 10, 2006, https://www.arlis.am/ (In Armenian)
6. Hayastani Hanrapetut'yan karavarut'yan vcharutyun N 1383-N, September 25, 2025 [RA Government Decree No. 1383-N, September 25, 2025], https://www.arlis.am/ (In Armenian)
7. Hayastani Hanrapetut'yan karavarut'yan vcharutyun N 1265-N, August 11, 2022 [RA Government Decree No. 1265-N, August 11, 2022], https://www.arlis.am/ (In Armenian)
8. "Hashmandamutyun unecox anzants iravunk'neri masin" [Law on the Rights of Persons with Disabilities], May 5, 2021, HO-194-N, https://www.arlis.am/ (In Armenian)
9. UN General Assembly. "Convention on the Rights of Persons with Disabilities", December 13, 2006, https://www.arlis.am/ (In Armenian)
10. "Nakhadprocakan krtut'yan masin" [Law on Preschool Education], November 15, 2005, HO-236-N, https://www.arlis.am/ (In Armenian)
11. "Petakan turki masin" [Law on State Duty], December 27, 1997, HO-186, https://www.arlis.am/ (In Armenian)
12. "Petakan kenstoshakneri masin" [Law on State Pensions], December 22, 2010, HO-243-N, https://www.arlis.am/ (In Armenian)
13. Varchakan iravakhakhtumneri veraberyal Hayastani Hanrapetut'yan orensgirk' [Code of Administrative Offenses of the Republic of Armenia], December 6, 1985, https://www.arlis.am/ (In Armenian)
14. "Qaghaqashinut'yan masin" [Law on Urban Development], May 5, 1998, HO-217, https://www.arlis.am/ (In Armenian)
15. Malko A. V. Stimuly i ogranicheniya v prave [Incentives and Constraints in Law]. Moscow, 2003, p. 250. (In Russian)
16. Miroshnik S. V. Pravovye stimuly v Rossiyskom zakonodatel'stve [Legal Incentives in Russian Legislation]. Rostov-na-Donu, 1997, p. 167. (In Russian)
17. Fomin A. A. Yuridicheskaya bezopasnost' - osobaya raznovidnost' sotsial'noy bezopasnosti: ponyatie i obshchaya kharakteristika [Legal Security as a Specific Type of Social Security: Concept and General Characteristics]. Gosudarstvo i pravo, 2006, no. 2, pp. 72–80. (In Russian)
18. Khayrullin V. I. Chto takoe "kommunitarnaya spravedlivost'" [What Is Communitarian Justice]. Gosudarstvo i pravo, 2007, no. 9, pp. 93–96. (In Russian)

Ашот Оганесян
Соискатель Института философии, социологии и права НАН РА,
Начальник отдела экспертизы судебно-правового законодательства
Агентства экспертизы правовых актов Министерства юстиции РА

РЕЗЮМЕ

Преимущества как вид правовых льгот

В статье рассматривается юридическая природа преимуществ как вида правовых привилегий и их значение. Преимущества, предоставляющие определённым лицам или группам особые права или свободы, представлены как исключения из общих правил, цель которых - социальная защита и улучшение юридического положения отдельных лиц. В статье выделены различные виды преимуществ, а также приведены примеры преимуществ, предоставляемых законодательством Республикой Армения определённым социальным группам, например, семьям погибших военнослужащих.

В данном научном исследовании отмечается, что преимущества могут также быть частью других правовых механизмов, включая гарантии, однако они различны. Юридические гарантии направлены на защиту прав человека, в то время как преимущества представляют собой специальные привилегии, предоставляемые определённым лицам с целью улучшения их юридического положения. Предоставление преимуществ должно быть чётко прописано в законах с целью обеспечения справедливости и предотвращения злоупотреблений.

Вышеупомянутое подчеркивает важность преимуществ как средства правового регулирования в создании справедливого и равного общества.

Ключевые слова: преимущество, неприкосновенность, льгота, привилегия, гарантия.

Ashot Hovhannisyan
Ph.D. Applicant of the Institute of Philosophy, Sociology
and Law of the National Academy of Sciences of the RA
Head of the Judicial Legislation Expertise Department of the Legal
Acts Expertise Agency of the Ministry of Justice of the RA

SUMMARY
Privileges as a type of legal advantages

This article discusses the legal nature of privileges as a type of legal advantage and their significance. Privileges, which grant certain individuals or groups special rights or freedoms, are presented as exceptions to general rules, aimed at socially protecting and improving the legal status of certain persons. The article outlines different types of privileges and provides examples of privileges granted by the legislation of the Republic of Armenia to certain social groups, such as the families of deceased soldiers.

This research emphasizes that privileges can also be part of other legal measures, including guarantees, but they differ. Legal guarantees are aimed at protecting human rights, while privileges are special advantages granted to certain individuals to improve their legal status. The provision of privileges must be clearly defined by laws to ensure fairness and prevent abuses.

The above highlights the importance of privileges as a means of legal regulation in creating a just and equal society.

Key words: advantage, inviolability, benefit, privileges, guarantee.

Ընագիրը ներկայացվել է 08.01.2026թ.
Ընդունվել է տպագրության 24.03.26թ.